

# **«Քրեակատարողական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ**

## **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

### **ՕՐԵՆՔԸ**

#### **«ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»**

**Հոդված 1.** «Քրեակատարողական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության 2005 թվականի հուլիսի 8-ի ՀՕ-160-Ն օրենքի 35-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի 5-րդ կետի «կրծքանշանով» բառից առաջ լրացնել «մեդալով կամ» բառերը.

2) 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 6-րդ և 7-րդ կետերով.

«6) քրեակատարողական ծառայության պատվոգրով պարգևատրում.

7) զենքով պարգևատրում:».

3) 5-րդ մասի 2-րդ և 3-րդ պարբերությունները շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Սույն հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով նախատեսված խրախուսանքը կիրառում է ՀՀ վարչապետը՝ քրեակատարողական ծառայության բարձրագույն և գլխավոր խմբի պաշտոններ զբաղեցնող քրեակատարողական ծառայողների նկատմամբ:

Սույն հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 5-րդ և 6-րդ կետերով նախատեսված խրախուսանքը կարող է կիրառել նաև քրեակատարողական ծառայության պետը: Սույն հոդվածի 1-ին մասի 4-րդ և 4.1-րդ կետերով նախատեսված խրախուսանքը կիրառում է քրեակատարողական ծառայության պետը՝ համապատասխան նախարարի համաձայնությամբ:

Սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված խրախուսանքը կարող են կիրառել նաև քրեակատարողական հիմնարկների ղեկավարները, իսկ սույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված խրախուսանքը կիրառվում է «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին»

Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված պահանջներին համապատասխան:».

4) լրացնել հետևյալ բովանդակությամբ 5.1-րդ մաս.

«5.1. Քրեակատարողական ծառայողն օրենքով սահմանված կարգով և դեպքերում կարող է ներկայացվել Հայաստանի Հանրապետության պետական պարգևների:».

5) 6-րդ մասում «5-րդ կետով» բառերը փոխարինել «5-րդ և 6-րդ կետերով» բառերով, իսկ «կրծքանշանի» բառից առաջ լրացնել «պատվոգրի, մեդալի և» բառերը.

6) լրացնել հետևյալ բովանդակությամբ 8-րդ մաս.

«Համապատասխան նախարարը կամ քրեակատարողական ծառայության պետը քրեակատարողական ծառայության քաղաքացիական ծառայողներին, տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց և այլ քաղաքացիներին ու անձանց կարող է պարգևատրել մեդալներով և պատվոգրերով:»:

**Հոդված 2.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը: